# ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Այս մրցույթին մասնակցել կարող են բոլոր ցանկացողները՝ուղարկելով իրենց տարբերակը/ները **marketing@greenrock.am** էլ. հասցեին՝ մինչև հունվարի 20-ը՝ Երեւանի ժամանակով ժամը 18:00-ն ներառյալ:

Մրցույթի մասնակցությունն անվճար է:

Մեքենաների դիզայնը պետք է ասոցացվի Դիլիջան քաղաքի հետ:

Մրցույթի շրջանակում դիտարկվելու համար մեքենաների դիզայնի ներկայացվող տարբերակները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին.
Ընդունելի ֆորմատը՝ JPEG, PNG, PDF

Տպագրության առանձնահատկություններ (UV լաքապատում, ուռուցիկ հատված, փայլուն հատված և այլն), եթե կան այդպիսիք պիտի նշված լինեն կից ֆայլում:

Հաղթելու դեպքում մասնակիցը Ընկերությանը պետք է տրամադրի դիզայնի տպագրական ֆայլերը՝ Adobe Illustrator կամ Corel Draw ֆորմատներով:

Նույն անձը կամ ընկերությունը կարող է ներկայացնել մինչ երեք տարբերակ:

Նամակի առավելագույն չափը՝ 10 MB

Ուղարկելիս էլ. փոստի Subject դաշտում պետք է նշված լինի taxi service contest գրվածքը:

Մրցույթի մասնակից անհատները կամ ընկերությունները մրցույթին մասնակցող աշխատանքը կարող են օգտագործել իրենց պորտֆոլիոյում, սակայն նույն դիզայնը այլ նախագծերի համար մինչ մրցույթի ամփոփման ավարտը օգտագործել չի թույլատրվում:

# ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
## մեքենայի դիզայնի հետ պետք է ներկայացնեն նաև

Անհատների դեպքում՝անուն, ազգանուն, հայրանուն, բջջային հեռախոսահամար, էլ.փոստի հասցե

Իրավաբանական անձանց դեպքում՝
Իրավաբանական անձի անվանումը, պաշտոնական կայքի եւ սոց.մեդիայի պաշտոնական էջերի հղումները (առկայության դեպքում), բջջային հեռախոսահամար, էլ.փոստի հասցե, ինչպես նաեւ տնօրենի անուն ազգանունը եւ հայրանունը։

# ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԻՆ ՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հաղթողներն ընտրվելու են **2 փուլով**

Առաջին փուլում «Գրին ռոք մենեջմենթ գրուպ» ընկերության մարքեթինգի թիմը կընտրի մրցույթի պայմաններին համապատասխանող եւ թիմի առավելագույն գնահատականին արժանացած դիզայնի 5 տարբերակները, եւ 2-րդ փուլ անցած անհատների եւ կազմակերպությունների անուններն ու աշխատանքները կհրապարակվեն Ընկերության սոցցանցերի էջերում եւ պաշտոնական կայքում (2024 թվականի փետրվարի 1-ին՝ մինչ 20:00):

Երկրորդ փուլում կանցկացվի բաց քվեարկություն ֆբ օգտատերերի շրջանում՝վերոնշյալ տարբերակներից առավելագույն հավանումներ եւ մեկնաբանություններ հավաքած տարբերակը կընտրվի մրցույթի հաղթող:

**Մրցույթի արդյունքները կամփոփվեն օնլայն փետրվարի 8-ին 20:00-ի դրությամբ:**

Հաղթողին/ներին հայտարարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությունը պարտավորվում է կնքել Ընկերության կողմից առաջարկվող պայմաններով պայմանագիր, ըստ որի՝հաղթող ճանաչված դիզայնի հեղինակային իրավունքը կանցնի Ընկերությանը: Հաղթողը չի կարող այդուհետ այն օգտագործել այլ նախագծերի համար: